

Ինչ է տիֆլոթարգմանությունը

Տիֆլոթարգմանությունը տեսողական տարրերի ձայնային մեկնաբանությունն է, այսինքն՝ այն, ինչ կույրերը չեն կարող տեսնել, այս տեխնոլոգիայի շնորհիվ կարող են լսել ու պատկերացում կազմել այս կամ այն իրերի, ֆիլմերի ու հաղորդումների մասին:

Ով կարող է տիֆլոթարգմանիչ դառնալ

Տիֆլոթարգմանությամբ կարող են զբաղվել դերասանները կամ այն մարդիկ, ովքեր գեղեցիկ առողջանություն և ձայնային տվյալներ ունեն: Տիֆլոթարգմանիչը պետք է ստեղծագործ միտք ու հարուստ բառապաշար ունենա, կարողանա հնարավորինս պարզ ու հակիրճ ներկայացնել տեսարանը: Տիֆլոթարգմանիչները հաճախ օգտվում են կույրերի խորհուրդներից: Նրանք հուշում են, թե որտեղ է թարգմանիչը թերացել, կամ ինչպես ներկայացնել նյութը, որ լսողները ճիշտ պատկերացում կազմեն:

Տիֆլոթարգմանությունն առավել հաճախ օգտագործվում է կինոթատրոններում:

2014-ին Սոչիում կայանալիք ձմեռային օլիմպիական խաղերի ժամանակ ևս հաշվի են առնվելու սահմանափակ կարողություններ ունեցող մարդկանց տեղեկացված լինելու իրավունքը: Բոլոր մրցաշարերի ցուցադրությունը կուղեկցվի տեքստային թարգմանությամբ՝ լսողության խնդիրներ ունեցող հեռուստադիտողի համար:

Դահլիճները, միջանցքները, սանհանգույցները հարմարեցված են լինելու տարբեր տեսակների հաշմանդամություն ունեցող անձանց: Գործելու են նաև վերելակները: Քաղաքային տրանսպորտից բացի, կգործի նաև մեկ այլ փոխադրման ծառայություն, որը պարաօլիմպիկ խաղերի մասնակիցներին և հաշմանդամություն ունեցող երկրպագուներին կտեղափոխի օդակայան, նավահանգիստ, երկաթուղային կայարաններ և այլն:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ բանկոմատներ կտեղադրվեն, կգործեն ձայնային լուսակիրներ:

Մեր հանրապետությունում նման մասնագետներ է պատրաստում Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը համապատասխան ֆակուլտետում:

Տիֆլոթարգմանության տեխնիկան

Տիֆլոթարգմանությունն ինքնրստիքյան ֆինանսական մեծ ծախսեր չի պահանջում, դրա համար էլ նրա բացակայությունը համաշխարհային կինոարտադրության մեջ այս տեսանկյունից արդարացնել չի կարելի: Որոշ

կինոարտադրողներ տիֆլոթարգմանիչների գործը հեշտացնելու համար նախապես պատրաստում են տեքստը:

Տիֆլոթարգմանությունն ստանալը բավական դյուրին է: Ցանկացողներին հատուկ ինֆորմակիր հաղորդիչներ են տրամադրվում: Դահլիճի որ անկյունում էլ կույր կինոդիտողը նստած լինի, ձայնը հաղորդիչի միջոցով հասանելի կլինի նրան: Հաղորդիչն ամրացվում է կինոդիտողի վերնաշապիկին կամ բաճկոնին, և ազդակները միանգամից հասանելի են դառնում:

Թարգմանչի գործը ևս բարդ չէ: Դահլիճի հետնամասում ապակեպատ սենյակ է լինում, որտեղ մեկնաբանի համար ականջակալ, բարձրախոս և ձայնը կարգավորող մկնիկ են դրված:

Անի Պետրոսյան